

Հանրապետական առարկայական օլիմպիադա
Հայ գրականություն
X դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

Մի քանի մասնակից, անկաշառ սիրով ու վստահությամբ մտի՛ր գրականության
կախարդական աշխարհ ու դարձի՛ր այդ աշխարհի լիիրավ տերը:
Հաղթանակ և բերկրանք եմ մաղթում քեզ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

1.Գրի՛ր Նահապետ Քուչակի սիրային հայրեններից մեկը և մեկնաբանի՛ր:
ա.Ի՞նչ է հայրենը:

բ.Ի՞նչ ավանդություն գիտես Քուչակի մասին :

գ.Ինչպե՞ս է բնորոշել Չարենցը Քուչակին: 5 մ.

2.Ո՞վ է Խաչատուր Աբովյանը: Ինչպե՞ս կբացատրես « Վերք Հայաստանի » (Ողբ
հայրենասիրի) վեպի վերնագիրն ու ենթավերնագիրը: Ո՞ր բանաստեղծն է Աբովյանին
« անձեռակերտ հուշարձան » կանգնեցրել,
(նշի՛ր երկի վերնագիրը և 1-քառատող) : 5 մ.

3.Ո՞վ է « Ազատության երգիչը » : Ովքե՞ր են անդրադարձել նրա կերպարին և ո՞ր
ստեղծագործությունների ո՞ր կերպարների համար է նա ծառայել որպես նախատիպ:
Ո՞վ է հեղինակը՝

-Ի՞նչ է --ասում է --չեք մտաբերու՞մ

Տարիներում այն մութ իմ բարբառած

Շոնդալից երգերն ըմբոստության մասին:-

Մաքառելով անցա ուղին ես իմ

Պայքարելով այն սև բռնության դեմ...

Գրի՛ր ստեղծագործության վերնագիրը: 5 մ.

4.Ինչպիսի՞ ստեղծագործություն է Պետրոս Դուրյանի « Տրտունջքը »: Ո՞ւմ հետ է վիճում
բանաստեղծը:

Ո՞ւմ դեմ էր դառնացած Դուրյանը, երբ ասում էր. « Հարգս չգիտցան, բայց պիտի
փնտրեն զիս »: Ի՞նչ շրջասույթներ գիտես Դուրյանի մասին: 5 մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան